ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4
ՀՀ Վայոց ձորի մարզխորհրդի նիստի

Ք. Եղեգնաձոր **26 դեկտեմբեր 2022թ. ժամը՝ 11:00**

Մարզխորհրդի նիստը նախագահում է ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա. Գրիգորյանը: Քարտուղարում է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի քարտուղարության պետ Հ.Ռուստամյանը:

Մարզխորհրդի նիստին մասնակցում են՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Դ. Սարգսյանը, Եղեգնաձոր համայնքի ղեկավար Դ. Հարությունյանը, Վայք համայնքի ղեկավար Մ. Մաթևոսյանը, Ջերմուկ համայնքի ղեկավար Վ. Արսենյանը, Արենի համայնքի ղեկավար Հ. Սահակյանը, Եղեգիս համայնքի ղեկավար Ա. Ստեփանյանը, Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Վ. Սարգսյանը, ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության պետ Ա. Հակոբյանը, ՀՀ ԱԱԾ ՎՁՄ վարչության պետ Կ. Միքաելյանը, ՀՀ ՊՆ Զ ԵՎ ԶՀԾ Վայոց ձորի մարզային տարածքային ստորաբաժանման ղեկավար տեղակալ Ս. Հայրապետյանը, ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Մարգարյանը, ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ս. Մարգարյանը:

Նիստի բացման խոսքով հանդես եկավ ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արարատ Գրիգորյանը:

Օրակարգի առաջին հարց՝ 2022 սեպտեմբերի 13-ի ադրբեջանական ագրեսիայի հետևանքով ՀՀ Վայոց ձորի մարզի տուժած Ջերմուկ համայնքի շահառու ֆիզիկական և իրավաբանական անձանց վնասի փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ

Նիստը նախագահող Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյանը օրակարգի առաջին հարցի վերաբերյալ ներկայացրեց զեկույց:

2022 սեպտեմբերի 13-ի ադրբեջանական ագրեսիայի հետևանքով ՀՀ Վայոց ձորի մարզում տուժեց մարզի Ջերմուկ համայնքը: Հրետակոծությունների հետևանքով տուժեցին համայնքի և՛ ֆիզիկական և՛ իրավաբանական անձինք:

Ջերմուկ համայնքի շահառու ֆիզիկական և իրավաբանական անձանց վնասի փոխհատուցում տրամադրելու համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 1468-Ն որոշմամբ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով հատկացվեց 50 000 000 (հիսուն միլիոն) ՀՀ դրամ:

Մարզային և համայնքային հանձնաժողովների կողմից ուսումնասիրվեցին և գնահատվեցին վնասները: Կազմվեցին ֆիզիկական և իրավաբանական անձանց վնասի փոխհատուցում տրամադրելու համար համապատասխան փաթեթներ: Կազմակերպվեցին տուժած ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ առանձին հանդիպում-քննարկումներ հատուցումը առավել հասցեական և արդյունավետ իրականացնելու նպատակով:

Ա.Գրիգորյանը առանձին-առանձին ներկայացրեց նաև փոխհատուցման համար ներկայացված համայնքային հանձնաժողովի կողմից կազմված ակտերը:

Արդյունքում՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի որոշումներով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 1468-Ն որոշմամբ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով հատկացված 50 000 000 (հիսուն միլիոն) ՀՀ դրամ գումարից կնքված համաձայնագրերի հիման վրա տրվեց վնասի փոխհատուցում՝

1. 17 977 000 (տասնյոթ միլիոն ինը հարյուր յոթանասունյոթ հազար) ՀՀ դրամ Ջերմուկ համայնքի տուժած շահառու ֆիզիկական և իրավաբանական անձանց:
2. 14 000 000 (տասնչորս միլիոն) ՀՀ դրամ Ջերմուկ համայնք՝ իրավաբանական անձին:
3. 610 000 (վեցը հարյուր տասը հազար) ՀՀ դրամ Ջերմուկ համայնքի տուժած շահառու ֆիզիկական անձանց:

Ներկայացված բոլոր գումարները արդեն հատկացված են և իրականացվել են ֆիզիկական և իրավաբանական անձանց բանկային հաշվեհամարներին փոխանցումների միջոցով:

Ընդհանուր առմամբ փոխհատուցվել է 32 587 000 ՀՀ դրամ, մնացորդային 17 000 000 ՀՀ դրամը վերադարձվել է ՀՀ պետական բյուջե:

Նիստը նախագահողը նիստի մասնակիցներին տվեց հնարավորություն ներկայացված զեկույցի վերաբերյալ հարցեր և առաջարկություններ ներկայացնելու:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Մարգարյան.

Գ.Մարգարյանը ներկայացրեց՝ 2021 թվականի օգոստոսի 17-ին մարզպետարան ահազանգ էր ստացվել ՀՀ Վայոց ձորի մարզի Սերս բնակավայրի բնակիչ Գ.Մեսրոպյանից առ այն, որ նույն թվականի օգոստոսի 16-ին ժամը 18:00-19:00 սահմաններում Սերս բնակավայրի վեց բնակիչներին պատկանող 117 գլուխ տարբեր սեռահասակային խմբերի խոշոր եղջերավոր կենդանիներ անցել են բնակավայրի «Գոգի լեռ» կոչվող տարածքի ստորին հատվածը, որը անմրջական շփվում է Ադրբեջանի սահմանի հետ և որտեղ արգելված է ՀՀ քաղաքացիների մուտքը: Օգոստոսի 17-ին ստեղծվել է աշխատանքային խումբ միջադեպը տեղում ուսումնասիրելու նպատակով: Աշխատանքային խումբը պարզեց, որ արգելված տարածք մտած 117 գլուխ ԽԵԱ-ներից 42 գլուխը վերադարձել է Սերս բնակավայրի տարածք, իսկ 75 գլուխը մնացել է արգելված տարածքում: Սեփականատերերի վկայությամբ, որոնք հեռադիտակով հսկել են արգելված տարածքում մնացած կենդանիների տեղաշարժը, օգոստոսի 17-ին ժամը 15:00-ի սահմաններում ադրբեջանական կողմից զինվորական համազգեստով 3 հոգի իջել են ձորը և քշելով տարել են 18 գլուխ անասուն: Այնուհետև նույն օրը ժամը 18:00-19:00-ի սահմաններում զինվորական համազգեստով 4-5 հոգի ձորից քշելով տարել են ևս 41 գլուխ անասուն, իսկ օգոստոսի 18-ի առավոտյան ժամը 10:00-ի սահմաններում՝ 16 գլուխ կենդանիներ: Մեր կողմից կատարված վերլուծությամբ կենդանիների շուկայական արժեքը կազմել է 16 180 000 ՀՀ դրամ:

2022 թվականի սեպտեմբերի 13-ի ադրբեջանական ագրեսիայի հետևանքով Ադրբեջանի տիրապետության տակ անցած կամ հրետակոծության հետևանքով Ջերմուկ համայնքում պայմանագրային հիմունքներով արտագնա արոտներից օգտվող Արենի և Արփի գյուղերի բնակիչներ կորցրեցին անասնագլխաքանակ: Ագրեսիայի հետևանքով Արենի համայնքի Արենի և Արփի բնակավայրերի անասնապահությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունների վնասի չափը կազմել է 2 560 000 դրամ:

Ընդհանուր վնասի չափը կազմել է 18 740 000 դրամ:

ՀՀ կառավարության 2022 թվականի թիվ 2037-Ն որոշմամբ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով հատկացվեց 13 118 000 (տասներեք միլիոն մեկ հարյուր տասնութ հազար) ՀՀ դրամ, որպես փոխհատուցում հետպատերազմյան շրջանում և 2022թ. սեպտեմբերի 12-14-ը Ադրբեջանի կողմից սանձազերծված ագրեսիայի հետևանքով կորցրած և/կամ սահմանն անցած գյուղատնտեսական նշանակության կենդանիների արժեքի 70%-ի չափով:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան.

Նշված գումարը տրվել է ոչ թե որպես փոխհատուցում, այլ աջակցություն: Աջակցության նպատակը այն է, որ քաղաքացիները ձեռք բերեն անասուններ և զբաղվեն անասնապահությամբ:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Մարգարյան.

Մեր ունեցած տվյալներով, վերոնշյալ քաղաքացիները ցանկանում են օգտվել նաև «Խելացի» անասնաշենքերի կառուցման ծրագրերից:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյան.

Հանձնարարում եմ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Մարգարյանին, որ հետևեք և պարտավորեցնեք քաղաքացիներին, որպեսզի տրված աջակցության գումարները նպատակային օգտագործեն:

Ամփոփելով նիստը, ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արարատ Գրիգորյանը շնորհակալություն հայտնեց մասնակիցներին, շնորհավորեց բոլորին գալիք տոների կապակցությամբ, առաջարկեց համայնքի ղեկավարներին ուղերձով դիմել համայնքի բնակիչներին, ինչպես նաև երեխաների համար կազմակերպել ամանորյա տոնակատարություններ:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ՝ Գ. Գրիգորյան **Ա.Գրիգորյան**